

Սումգայիթյան ջարդերը բռնություններ էին Սովետական Ադրբեջանի ծովափնյա քաղաք Սումգայիթում տեղի հայ բնակչության նկատմամբ, որ տեղի ունեցան 1988թ. փետրվարին: 1988թ. Փետրվարի 27-ին, էթնիկ ագերիներից կազմված ամբոխը խմբեր կազմելով հարձակվում էին հայերի վրա ամենուրեք՝ փողոցներում և նրանց բնակարաններում, անարգանքի ենթարկում, սպանում և թալանում: Այդ բոլոր իրադարձությունները տեղի են ունենում ոստիկանության և կառավարության աջակցությամբ: Այդ դեպքերը աննախադեպ էին իրենց վայրագությամբ և անմարդկայնությամբ:

«Սովորական ցեղասպանություն. Սումգայիթ, փետրվար 1988» ֆիլմի հեղինակն ու պրոդյուսերն է լրագրող Մարինա Գրիգորյանը, համահեղինակը՝ ՀՀ Աժ պատգամավոր Լարիսա Ալավերդյանը:

Ֆիլմում ցուցադրվում են սումգայիթյան ոճրագործությունների սահմեկեցուցիչ կադրեր, նյութեր, որոնք դեռևս չեն ներկայացվել հանրությանը: Ըստ Գրիգորյանի՝ ինքը նյութեր է հավաքել մարդկանցից, որոնք ականատես են եղել Ադրբեջանում, ինչպես նաև Ղարաբաղում բռնկված ազգամիջյան լարվածությանը, որը, ի վերջո, հանգեցրեց պատերազմի:

Համահեղինակ Լարիսա Ալավերդյանի խոսքով՝ «Այս ֆիլմը քարոզչական նպատակներ չունի, այլ հակառակը՝ սրա նպատակն է ցուցադրել բացառապես փաստեր, և հանրությանը ներկայացնել միայն իրականությունը»:

Ֆիլմում օգտագործվել են ականատեսների պատմություններ, հարցազրույցներ սպանվածների բարեկամների հետ, դրվագներ հենց դեպքի վայրերից, ինչպես նաև կադրեր ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1988 թ. նոյեմբերի դատական նիստերից:

Ֆիլմը «Սովորական ցեղասպանություն» ֆիլմաշարի երկրորդ կինոնկարն է, որը ստեղծվեց ՀՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության և հանրային կապերի կենտրոնի աջակցությամբ: Առաջինը՝ «Բաքու, հունվար, 1990 թ.», ցուցադրվել է 2010 թ. հունվարին:

{youtube}XvC9Qr8fBN4{/youtube}

{youtube}2y9u1K0mXIU{/youtube}